




ՏՕՆ՝ ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ



ԺԱՄԱՄՈՒՏ

Պատուական եւ ամենայաղթ խաչիդ ամջել խոնարհած՝ երկրպագութիւն կ'ընենք քեզի, Տէ՛ր, եւ մեր յանցանքներուն թողութիւնը կը խնդրենք, որովհետեւ անով դուն ջնջեցիր մարդկային ցեղի դատապարտութիւնը: Եւ հիմա, շնորհիւ աստուածային սուրբ Նշանիդ՝ երկնային խաղաղութիւնդ շնորհէ՛ ամբողջ աշխարհին:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԲՁ

Քեզի՝ Քրիստոս որ կաթողիկե Եկեղեցւոյ՝ այս յաղթական եւ պատուական աստուածընկալ Ս. Նշանը շնորհեցիր, օրհներգութիւն կը մատուցանենք բարձունքներու մեջ:

Այս Նշանը քու կամքովդ, ո՛վ Քրիստոս, ամենագոր սուրբ Յոզիին օգնութեամբ եւ հրեշտակներու դասին հետ թռչելով կու գայ Վարագայ լեռը բնակելու:

Ժողովուրդներ, եկե՛ք երկրպագենք Աստուածային Ս. Նշանին, Միասնաբար: Ձեր ձեռքերը բարձրացուցէ՛ք դէպի սրբութիւն, եւ ասոր մէջ բնակողը միշտ փառաբանեցէ՛ք:

ՄԵՍԵՂԻ (Սաղմոս 4, 7ը, 1)

Քու տեսքիդ լոյսը մեր վրայ շողաց եւ մեր սիրտը ողորուեցաւ ուրախութեամբ: Երբ քեզի դիմեցի արդարութեան համար, լսեցիր զիս, Աստուած իմ:

Դուն, որ Նեղութեանս ատեն սրտի հանդարտութիւն շնորհեցիր ինծի, ողորմե՛ ինծի եւ աղօթքս լսե՛:

Աղօթքներս լսե՛ եւ ամէն մարմնաւոր եակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

**ԸՆԹԵՐՅՈՒԱԾ
ԽԱՉԸ՝ ՊԱՐԾԱՆՔ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ**

**Պօղոս առաքեալին գաղատացիներուն ուղղած թուղթն
(Գաղ 6, 14-18)**

Ես չեմ պարծենար, եթէ ոչ միայն խաչով մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, որով աշխարհը ինծի համար խաչաւած է եւ ես խաչուած մըն եմ աշխարհին համար: Որովհետեւ ոչ թլփատութիւնը արժէք ունի եւ ո՛չ ալ անթլփատութիւնը, այլ՝ նոր արարածը: Եւ անոնց, որոնք պիտի հետեւին այս կանոնին, խաղաղութիւն եւ ողորմութիւն, ինչպէս նաեւ Աստուծոյ Իսրայէլին: Այսուհետեւ, թո՛ղ ոչ ոք խանգարէ զիս, ես Յիսուսի չարչարանքները կը կրեմ մարմինիս մէջ: Եղբայրներ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի շնորհքը թո՛ղ ըլլայ ձեր հոգիին հետ. Ամէն:



Ալէլուիա, Ալէլուիա,

Երբ քեզի դիմեցի արդարութեան համար, լսեցիր զիս Աստուած իմ: Դուն որ Նեղութեանս ատեն սրտի հանդարտութիւն շնորհեցիր ինծի:

(Սաղմոս 4, 2)

Ալէլուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՒ ԵՆԱԼՆ

(Մատթ 24, 30-35)

«...Այն ատեն երկինքի վրայ պիտի յայտնուի Մարդու Որդին նշանը: Այն ատեն երկրի ազգերը իրենց կուրծքը պիտի բախեն եւ պիտի տեսնեն Մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերու վրայ իր ամբողջ զօրութեամբ եւ փառքով: Պիտի դրկէ իր հրեշտակները մեծ փողերով՝ հաւաքելու համար ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թզենիէն սոր-

վեցէք առակը: Երբ անոր ոստերը թարմանան եւ տերեւները ցցուին, գիտէք որ ամառը մօտ է: Նմանապէս դուք, երբ տեսնէք այն բոլոր նշանները, գիտցէ՛ք որ Մարդու Որդին մօտեցած է, ձեր դռներուն առջեւն է: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, այս սերունդը պիտի չանցնի մինչեւ որ այս ամէնը չկատարուի: Երկինքն ու երկիրը պիտի անցնին, բայց իմ խօսքերս պիտի չանցնին»:

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

ՅՆԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՓԱՌԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ԱԿՆԿԱԼՈՒԹԵԱՄԲ...

Այս Կիրակի, Սեպտեմբեր 30-ին, տօնն է «Վարագայ Սրբոյ Խաչին», զուտ հայապատում, որովհետեւ է «երեւումն Ս. Խաչին՝ ի Հայաստան աշխարհիս», 653 թուականին:

Եթե՛նրորդ դարը դառնակակիծ տառապանքով լեցուն ժամանակաշրջանն էր բիւզանդացիներուն, պարսիկներուն եւ արաբներուն միջեւ տեղի ունեցած նուաճողական մրցակցութեան պատճառով, որուն արիւնսաքամ զոհը կ'երթար անտէր հայ ժողովուրդը:

«Համատարած տխուր այս իրավիճակին մէջ՝ յոյսի, հաւատքի, հոգեկան նոր ոյժի եւ զօրութեան Լոյսն է ահա, որ հրաշքով կը ծագի հայոց աշխարհի Վանի Վարագայ լեռներուն վրայ», ուր նահատակ Ս. Հռիփսիմէ կոյսին դարերով պահուած կորսուած խաչիկը տեսնելով՝ անկէ տեղափոխուեցաւ եւ հանգչեցաւ Վարագավանքին խորանին վրայ:

Հայաստանի մօտաւոր եւ հեռաւոր շրջաններէն տառապած ու յուսահատած ժողովուրդը կը հասնի՝ պաշտելու համար տասներկու օր հոն գտնուած լուսափայլ Ս. Նշանը, որուն ի պատիւ օրուան կաթողիկոսը՝ Ներսէս Գ. Ծինող

Տայեցի (641-661), «Չուարթնոց» հոյակապ եռայարկ տաճարը կառուցանել տուողը, յօրինեց մեր ամենէն իմաստալից ու գեղեցիկ շարականներէն մէկը՝ «Նշանաւ ամենայադթ Խաչիւդ» սկզբնատառերով:

Չօրութեան, յաղթութեան, ուրախութեան ու փրկութեան գովերգն ամէն տունին մէջ կ'աւարտի փառատրանքով «մարդասէր ու հրաշագործ Թագաւորին», որուն «երկրորդ ահաւոր գալուստին» ազդանշանը կը տրուի «այսօր Խաչին» տօնախմբումով՝ մեզ ներմուծելով տօնին խորհուրդին մէջ, երբ կը կարդանք եւ կը խորհրդրդածենք կիրակնօրեայ աւետարանը (Մտթ. 24,30-35), բայց յատկապէս երբ կ'ապաւինինք անոր ներշնչած թելադրանքներուն եւ կը ջանանք գործադրել զանոնք՝ մեր հոգիները փրկելու համար ամէն մարդի մէջ ու ամէն մակարդակի վրայ այս խառնաշփոթ եւ անկարգ դարաշրջանէն...:

«Զրիստոսի գալուստը» խորագրեալ հատուածին խօսքերը Յիսուսի Սրտէն եւ մտքէն մեզի կը փոխանցէ Ս. Մատթէոս, առաջին աւետարանիչը, որուն համաձայն՝ «Մարդու Որդին



Նշանը» Յիսուսի խաչն է կամ նոյնիսկ Յիսուս Փրկիչը: Ան պիտի յայտնուի երկնակամարին եւ ամպերուն վրայ «իր ամբողջ զօրութեամբ ու փառքով»:

Երկինքը սիրակառոյց տունն է Տիրոջ, որուն ամենախնամ ներկայութիւնը կը խորհրդանշէ «ամպերուն վրայ» բացատրութիւնը: Ահաւասիկ, այս է առաջին տեսարանը, որուն կը յաջորդէ երկրորդը՝ բացող հորիզոնափայլ արշալոյսը մեր առջեւ...:

Քրիստոսի երեւումէն ետք՝ հրեշտակները իբր մշակներ պիտի դրկուին հաւաքելու համար ընտրեալները «աշխարհին չորս կողմերէն»: Ստուգիւ, շատ միախորական խոստում մըն է ասիկա: Ոչ մէկ ընտրեալ պիտի մոռցուի: Այո՛, բոլոր ընտրեալները պիտի փնտռուին, գտնուին, մէկտեղուին եւ

բերուին «Մարդու Որդիին», որ Դատարար-Թագաւորն է աշխարհի կատարածին, ինչպէս ալ ընդունողը՝ իր «սիրելիներուն»:

Յոգեմտաւոր ուշադրութեամբ կ'անդրադառնանք: Պիտի գան եւ պիտի բերեն մեզ: Թե՛ հրաշալի ասացածքն է ասիկա ու թե՛ հրաշագան տեսարանը պիտի ըլլայ ապագան, որ արդէն հոս՝ այս մեր կեանքին մէջ դարձնելու ենք այն իրողութիւնը, որուն համար կ'ապրինք եւ կը գործենք:

Աստուած, Գթասիրտն ու Մարդասէրը, կը հրաւիրէ մեզ: Կ'երեւի մեզի եւ իրեն մեզ բերել կու տայ իր հրեշտակներուն՝ առանց մոռնալու մեզմէ մէկը լքուածութեան ու յուսահատութեան մէջ: Այո՛, մեզմէ ոչ մէկը պիտի մոռցուի: Մեզմէ ոչ մէկը պիտի լքուի: Այս ինչպիսի՛ ապահովութիւնն է, ստուգութիւնը՝ մեզի տրուած Աստուծոյ սէրէն...: Նաեւ յիշեցումն է այն անդորրացնող ու ստուգապատում հրաւերին, որով Յիսուս կ'ուզէ մեզ արթուն պահել գալիքին համար. «Նշաններ պիտի երեւին արեւին, լուսինին եւ աստղերուն մէջ: ... Երկնքին զօրութիւնները պիտի սասանին: ... Երբ սկսին այս դէպքերը, կանգնեցե՛ք ու բարձրացուցե՛ք ձեր գլուխը, որովհետեւ մօտ է ձեր փրկութիւնը» (Ղկ. 21,25,26,28):

Պիտի ըլլայ օրը ցնծութեան ու փառաւորութեան՝ մեզի՛ համար, եթէ հոս կ'ապրինք Յիսուսի հետ: Երջանկացրնող զգացումն է ասիկա: Ստուգութիւնը մեր յաւերժութեան, որուն ստացումին համար՝ Աստուածամօր կը դիմենք Ներսէս Գ. Կաթողիկոսին հետ. «Լուսամա՛յր, Մարիամ, Ս. Կոյս, սերովքէներուն կողմէ փակուած դրախտին դուռը Զեզմով բացուեցաւ եւ Զեզմով տրուեցաւ մեզի անմահութեան Փայտը, որուն վրայ գնեալ Անմահը այսօր լուսաւորեց երկնքէն, հոգեւոր երգով կը մեծացուցանենք Զեզ, Սրբուհի»: